«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

---

## Ցուցանմուշ 7–2: **Նմուշ** Տարեկան կրկնակի ատեստավորման առաջին հիշեցնող ծանուցում

(Վարձակալի անունը, ազգանունը / Tenant’s Name)
(Հասցեն / Address)

(Ամսաթիվ, առաջիկա կրկնակի ատեստավորման տարեդարձից առնվազն 120 օր առաջ / Date, at least 120 days prior to the upcoming recertification anniversary date)

Հարգելի ________________.

Շուտով գալու է ձեր տարեկան կրկնակի ատեստավորման ժամանակը: Գրեթե մեկ տարի առաջ տեղի ունեցած հարցազրույցին դուք ստացել էիք ծանուցում ձեր առաջիկա ատեստավորման մասին:

Ձեր վարձակալության պայմանագրի պարբերություն [15–ում, 10–ում կամ 9–ում՝ նշե՛ք այն պարբերության համարը, որը համապատասխանում է վարձատուի համար օգտագործվող օրինակելի վարձակալության պայմանագրին / 15, 10 or 9—indicate the paragraph number that corresponds to the paragraph of the model lease being used for the tenant] նշված է, որ Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարությունը (HUD) պահանջում է, որպեսզի մենք ամեն տարի ստուգենք ձեր եկամուտը և ընտանիքի կազմը՝ որոշելու, թե արդյոք դուք դեռևս իրավասու եք վարձավճարը վճարելու հարցում օգնություն ստանալու համար:

Մեր կողմից ձեր եկամուտի և ընտանիքի կազմի ստուգումը կատարելու համար դուք պետք է հանդիպեք (ռեզիդենտ մենեջերի, վարձակալության ծառայողի և այլն / Resident Manager, Occupancy Clerk, etc.) հետ (հարցազրույցի վայր / place of interview)–ում և տրամադրեք պահանջվող տեղեկատվությունը: (Ռեզիդենտ մենեջերը, վարձակալության ծառայողը և այլն / Resident Manager, Occupancy Clerk, etc.) հասանելի կլինի կրկնակի ատեստավորման հարցազրույցների համար (հասանելի լինելու ամսաթվերը և ժամերը / date and times available): Հարցազրույցի համար հանդիպում ժամադրելու համար խնդրվում է հնարավորինս սեղմ ժամկետում դիմել (ռեզիդենտ մենեջերին, վարձակալության ծառայողին և այլն / Resident Manager, Occupancy Clerk, etc.) (հեռախոսով, գրասենյակում / by phone, at the office):

Կրկնակի ատեստավորման պահանջի հարցում համարգործակցելը հանդիսանում է ծրագրում շարունակական մասնակցության պայման: **Դուք պարտավոր եք ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը և ապահովել պահանջվող ստորագրությունները, որպեսզի սեփականատերը կարողանա ընթացք տալ ձեր կրկնակի ատեստավորմանը:** Եթե դուք պատասխանեք սույն ծանուցմանը (նշե՛ք վերջին տարեկան կրկնակի ատեստավորումից հետո 11ոդ ամսվա 10ոդ օրը / insert the 10th day of the 11th month after the last annual recertification) հետո, ապա ձեր վարձակալության պայմանագրի պարբերություն 15–ը (եթե կիրառելի է / if applicable) մեզ իրավունք է տալիս կատարելու կրկնակի ատեստավորումից բխող վարձավճարի ցանկացած բարձրացում՝ առանց 30–օրյա ծանուցում տալու:

(**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Բոլոր ծրագրերի վարձակալների համար, <u>բացառությամբ PRAC ծրագրերի</u>, ավելացրե՛ք հետևյալ նախադասությունը / **NOTE:** For tenants of all projects, <u>except PRAC projects</u>, add the following sentence): Եթե դուք չեք պատասխանում մինչև (դրե՛ք վերջին տարեկան կրկնակի ատեստավորման ամսաթիվը / insert recertification anniversary date), ապա ձեր վարձակալության պայմանագրի պարբերություն [15–ը**կամ **14–ը / paragraph 15 **or** 14] մեզ իրավունք է տալիս դադարեցնելու ձեր օգնությունը և գանձելու ձեզանից (**նշե՛ք վարձավճարի տեսակը կամ** շուկայական վարձավճարը, պայմանագրային վարձավճարը կամ 110%–ը կամ BMIR վարձավճարը / **insert type of rent, either** market rent, contract rent or 110% of BMIR rent), որն ուժի մեջ է (նշե՛ք կրկնակի ատեստավորման տարեդարձի ամսաթիվը / insert the recertification anniversary date):

«Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ը տալիս է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում»:

---

(**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** PRAC ծրագրերի վարձակալների համար ավելացրե՛ք հետևյալ նախադասությունը / **NOTE:** For tenants in PRAC projects add the following sentence): Եթե դուք չեք պատասխանում մինչև (նշե՛ք կրկնակի ատեստավորման տարեդարձի ամսաթիվը / insert the recertification anniversary date), ապա ձեր վարձակալությունը կարող է դադարեցվել:

Հարցազրույցի հաճախելիս, դուք պետք է բերեք հետևյալ տեղեկատվությունը.
(Թվարկե՛ք ամբողջ պահանջվող տեղեկատվությունը / List all required information):

Անկեղծորեն,

**«Ստորագրման ենթակա է վարձակալության պայմանագրի միայն անգլերեն տարբերակը»:**

(Կառավարող գործակալ, ռեզիդենտ մենեջեր և այլն / Managing Agent, Resident Manager, etc.)